ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2012թ. N 506

ք. Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի „բ" ենթակետով, 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1368-Ն որոշումը, 2012 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հատուկ դպրոցներում կրթական ծրագրերի ուսուցման գծով ծառայությունների իրականացման նպատակով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Տարրական ընդհանուր կրթություն>> հատուկ կրթություն ծրագրի տնտեսագիտական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով նախատեսված 75793600/ յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր ինենսուներեք հազար վեց հարյուր / դրամ գումարը,, << Միջնակարգ ընդհանուր կրթություն>> հատուկ կրթություն ծրագրի տնտեսագիտական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով նախատեսված 88265900 /ութսունութ միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար ինը հարյուր/ դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության թվով 2 հատուկ դպրոցներին աշակերտ թվերին համապատասխան բաշխել համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին (Փ. Կարապետյան) սահմանված կարգով իրականացնել պայմանագրերի կնքումը և համապատասխան գումարների փոխանցումը հանրակրթական դպրոցների հաշվեհամարին :
3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ